# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 01 >> 06 2012 թվական N: 43 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $77^1$ –րդ և $77^2$ –րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի «Վարչական հսկողության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 11-Ա հրամանը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Լիպարիտ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, խմբի ղեկավար

Հուրիկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Գագիկ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Լյովա Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ

Հայկ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

Նաիրա Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ

Արմեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափի համայնքում 10 աշխատանքային օրվա ընթացքում, 2009 թվականի հուլիսի 1-ից մինչև 2012 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար իրականացնել վարչական հսկողություն (ժամկետ՝ 2012 թվականի հունիսի 8-ից մինչև 2012 թվականի հունիսի 21 -ը):

2) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել արդյունքները և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է